ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Էկոլոգիապես մաքուր էներգիայի աղբյուրների անցումը պահանջում է նկատելի ծախսեր: Հարուստ զարգացած երկրները պահանջում են, որ բոլոր երկրները մասնակցեն ներդրումներին: Մինչդեռ զարգացող երկրները առարկում են, պնդելով, որ մթնոլորտի աղտոտման ու կլիմայի փոփոխության համար պատասխանատու են հենց զարգացած երկրները, արդյունաբերական հզոր տերությունները. նրանք են պրոբլեմը ստեղծել: Նրանք են վաղուց արդեն աղտոտում մթնոլորտը ջերմոցային գազերով, ուրեմն, նրանք էլ պիտի ջերմաստիճանի աճի նվազման համար անհրաժեշտ ֆինանսական ծախսերը հոգան: Իսկ զարգացած երկրները շատ էլ հակված չեն դանդաղեցնելու իրենց տնտեսության զարգացումը հանուն գլոբալ տաքացման նվազեցման:

2016 թ. ապրիլի 22-ին 175 երկիր Փարիզում ստորագրեցին կլիմային վերաբերող պայմանագիր: Գլխավոր նպատակն էր հասնել ջերմոցային գազերի արտանետման նկատելի նվազեցման և այսպիսով պահել մոլորակի միջին ջերմաստիճանի բարձրացումը 1,5-2 աստիճանի սահմաններում: Յուրաքանչյուր երկիր պարտավորվել էր.

- *Ընդունել արտանետումների նվազեցման ազգային պլան-ծրագիր, տեխնոլոգիապես վերազինվել և հարմարվել կլիմայական փոփոխություններին:*
- *Պլանավորված ձևով նվազեցնել ածխաթթու գազի արտանետումները մթնոլորտ, մշակել անածխածին տնտեսության անցման ազգային ռազմավարություն:*
- *Մեծացնել անտառային տարածքները, որոնք կլանում են ածխաթթու գազ:*

Սակայն հակասությունները շատ էին և դժվար էր ընդհանուր համաձայնության գալ: Արդյունքում պայմանագիրը պարտադրող ուժ չստացավ: